

Ltn

✓ 1517

ՆՕԴԵՅԻ

1999

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՈՑԱՆԱԻՈՐՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

2005

ԳԵՈՐԳ Ս. ԻՍՐԱԶԵԱՆՑ

ՕԶՆԵՑԻ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Կարան Մովսիսի Վարդանեան

1885

Ltn  
1517

ՀԱՅ ԵՂԻՍԵՐԵՒԹՅՈՒՆ



«Նժդեհի բանաստեղծութիւնները» որ առ այժմ բաղկանում է տասն զրքերից, իւրաքանչիւրը հարիւր ոտանաւոր գրուածներով, ծնունդն է մեր երկասիրութեան, գրուած տասն կամ աւելի տարիների միջոցում:

Ի նկատի ունենալով մեր ոչ բարձր զիրքը ուսումնական ասպարիզում, ցայժմ չէինք լանդըզնում այդ մեր անմեղ մտքերը լոյս աշխարհ հանել. բայց հրապուրուելով մեր միքանի բարեկամների տուած խորհրդից, և ստիպուած թախանձանքներից՝ առ այժմ հրատարակում ենք միմիայն միքանի հատը նրանցից, որոնք եթէ կուենան միորեւ արժէք, եթէ կընդունուին մեր սիրելի հայերից, մենք կըխրախուսուենք շարունակելու մեր լուծան ձգել Ազգային լառաջարկմութեան զանձանակի մէջ.—մեզ համար վարձատրութիւն հաշուելով միայն դրանից ազգին հասուցուած բարոյական օգուտը.—եթէ կար միայն:



Доз. Пензу. ою. Тифли., 13 Ноября 1884 года.

Тил. П. Вартачанца прот. Тройц. ц. д. № 11

38 1519

4517-60

Ընդունիր հարազատ որդուդ նուէրը, ո՞վ ազգ,  
որ իւր կարեաց չափ կամեցել է երախտահատոյց լի-  
նել քեզ, քեզանից ստացած անգին նուէրի—հայա-  
խօսութեան, սուրբ պարգևի մասին, որը եթէ կը-  
գտնէ քեզանից ընդունելութիւն՝ մատակարարելով  
գէթ ամենափոքրագոյն օգուտ, այն կըլինի բախ-  
տի հարուածներէից վիրաւոր գրողի համար բախտ:

Ընկալուչ՝ ուղղիչ— քննադատութեանց  
քաջազէտ հայ եղբարցդ, Գէորգ Ս. Խա-  
րազեանց Օձնեցի:

Ի 1884 ամի:

### ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ԲՈՂՈՔԸ.

Յափշտակուած էք, գիտնական եղբարք,  
Խօսքեր, յաւիտեան խօսքեր էք խօսում.  
Առանց քննելու մեր դիրքն հոգևարք,  
Թոյլերիս՝ ոյժ էք երևակայում.

Եղբարք, գործնական զննութեան առէք,  
Ընկած ենք, մեր մէջ ոչինչ կըգտնէք:

Լոկ գրչով, մրով մեզ զգզեցիք,  
Մերթ մի տոկուն տարր, մերթ ոյժ կարծեցիք.

Սիրածին չէ որ անձամբ կայցելեն,  
Ըղձի առարկին աչքով կըդիտեն.

Փոքր ինչ նեղացէք, եղբարք, տես եկէք,  
Ընկած ենք, մեր մէջ ոչինչ կըգտնէք:

Պիտոյ չեն, եղբարք, մեզ՝ ձեր տքնել,  
Գրասեղանի մօտ ճիգ թափել քրտնել.

Պատրաստ հող չունինք—այդ չենք ընդունում,  
Ապրուստի դիւրին դեռ ձե ենք հայցում.

Քիչ կոշտ ապրեցէք, մեզ մօտ գործեցէք,  
Ընկած ենք, մեզ մօտ ոչինչ կըգտնէք:

Մեզ Չինարէն է՝ «Ազգ», «Ազգայնութիւն»,  
Ծիծաղական միտք նորա գոյութիւն.

Այնքան զեղծմունք ենք կարդւորից տեսել,  
Որ սկսել ենք ուսումն էլ ատել.

Եկէք մեզ գործով օրինակ տուէք,  
 Ընկած ենք, մեզ մօտ ոչինչ կը գտնէք:  
 Եկէք փորձեցէք պառկել մերկ գետնին,  
 Կէս-սնունդ՝ տոկալ տօթին ու ցրտին,  
 Միշտ հայցւոր մանկուոյն «քչով» պահեցէք,  
 Սնվերջ պահանջները լրիւ հատուցէք,  
 Տեսնենք յաջողուած մի բան կը գտնէք:  
 Մեզանից բերրի հողն է խռովել,  
 Արդիւնքների փոխ ախտերն են աճել.  
 Երկինքը մեր ձայնն այլևս չէ լսում,  
 Պիղծ ձեռքերով է մեր նուէրքը մատչվում.  
 Սորանց իրական ճար պատրաստեցէք,  
 Ընկած ենք, մեզ մօտ ոչինչ կը գտնէք:  
 Հերիք է, եղբարք, ինչ վրդովեցիք,  
 Ոչ այլը, դուք ձեզ գնահատեցիք.  
 Քեասիբ գիւղացուն հաց ու ջուր տուէք,  
 Կառավարելու կերպերն ուսուցէք.  
 Կրականաբար թէ սրանք կանէք,  
 Յայնժամ՝ յուսացէք, մի բան կը գտնէք:

ՀԱՄԲԱԼԻ ՏՈՒԷՔ.

«Համբաւ տուէք հայրենիքից,  
 է՛յ անտարբեր սուլող հողմեր,

Տիտաններեայն աշխարհից  
 Հաղորդեցէք ուղիղ լրեր»:

— «Հայրենիքդ է ամայացած,  
 Հեռքը չկայ տիտանների,  
 Գետնախշտի կան վայր ածած,  
 Կմախքները գաճաճների:

«Համբաւ տուէք հայրենիքից,  
 Ո՛վ երկրագէտ մեծ լուսաւորք,  
 Այն արդիւնոտ սկիւ հանքից,  
 Եղէք ճշտին համբաւաւորք»:

— «Հայրենիքդ է աղբատացած,  
 Չունին չոր հաց մէր ու մանուկ,  
 Կաշտ ու հանքեր կան խափանած,  
 Ծուլացած են ձեռքեր-բանուկ:

ՁՄՐԱՆ ԱՌԱՒՈՏ.

Ձմրան առաւօտ ամպամերձ երկին,  
 Զիւնասաւան դիւղ քամակալն երթկին.  
 Չկայ հողմ ու բուք, սաղախն է փչում,  
 Օրթ-օջախից ծուխը երկինք բարձրանում:  
 Իլախտան միջին, օջախը պատած,  
 Կիսամերկ մանկունք կան դողով կկղած,

Ճնգում են վնգում, ուտելիք հայցում,  
 Յրաիցը խթւում կրակը մտնում:  
 Հայր, մայր, տատ ու պապ տիրութիւն հազած,  
 Մերթ բարկանում են մնում սգառած.  
 Ի՞նչ կայ, որ ինչ տան քաղցած փոքրերին,  
 Ոչ պարկումն ալիւր, ոչ հաց կայ տաշտին:  
 Երէկ էր տարաւ անգութ վաշխառուն  
 Աղքատ ընտանեաց սնունդ ու պաշար,  
 Հաշուեց ու բարդեց «շահը» շահերուն,  
 Տոկոսն ստացաւ, մուրհակը դեռ կար:  
 Յուսալիւր հոգով երկինքը չուէլ,  
 Օդն էր այսալիւր, սանդուղքը կոտրած.  
 Անգութ սառնասիրտ մարդոցը դիմէլ,  
 Ապարդիւն կըլինէր հազար խնդրուած:  
 Բողոք արձակէլ դէպ պայծառ երկինք,  
 Եւ այդ խեղդվում էր— կային օդայինք.  
 Ապրել լոկ օգով, կրակի գոլով —  
 Եւ ի հարկէ այդ անհնարին էր:  
 — «Օրթ-օջախի ծուխ, վկայ ինքնատես,  
 Երկինք ես դնում բարդվում դիզանում.  
 Պատմի՛ր՝ անդ տեսած աղէտքդ պէս-պէս,  
 Ասա՛ քաղցածներն հացիկ են հայցում:  
 Պատմի՛ր կայ մի տեղ մեծ առատութիւն,  
 Պարէնի աւելն շներն են ուտում.  
 Միւս տեղ՝ կենսաւեր մեծ աղքատութիւն —  
 Գերացած շների մնացորդն են հայցում:

Ծուխն էլ զլացաւ պատմել իւր տեսած,  
 Թէ երկինքըն էր բարկ երեսն սքօղած,  
 Անգօր եմ վճուել այդ ներհակ դրութիւն,  
 Խրճթին տիրում է դեռ աղքատութիւն:

ՀԱՅ ԿԻՆ.

(Նախապաշարմունքներ)

Հայ կին, եկաւ նոր տարին,  
 Որձկականչին դուրս գնա՛,  
 Տուն բեր փայտեր քո գրկին,  
 Որ ողջ տարին լաւ գնայ:

Հայ կին, կաղանդ լուսացաւ,  
 Սփռիւր գունումդ կարմիր շոր,  
 Մնցցնես տարին որ անցաւ,  
 Միշտ ունենաս կարմիր օր:

Հայ կին, աչքաուլունքներ  
 Կարիւր մանկանդ թիկունքին,  
 Որ տրաքուած չար աչքեր  
 Նազար չտան մաեռկին:

Հայ կին, երեկոյ դառած  
 Աղբ չտանես աղբահար,  
 Որ կըտեսնես յետ դառած  
 Մալ ու դովլաթդ, անհամար:

Հայ կին, որրանը մենակ է,  
Աղբիւրն ես գնում ջուր բերել,  
Մանկանդ դէտը շամփուրն է,  
Դիր պահապան, կան չարեր:

Հայ կին, բողջիդ ասեղ դիր,  
Հուրի մալաք որ քաջքեր  
Են հանապազ ի խնդիր  
Տար-բեր կանեն քո շորեր:

Հայ կին, կրակի վրից  
Տաք-տաք ջուրն ես վեր ունում,  
Է՞ր հրեշտակին կարեկից  
«Շօրս բառօնօսն չես ասում:

Հայ կին, մանուկդ է վախել,  
Եօթ սեան տակից հող վերառ,  
Մէզ մազիդ հետ խմացուր,  
Այդ է ճարը, չես խելառ:

Հայ կին, մանուկդ է հիւանդ,  
Ունի եարայ, բկացաւ,  
Խաչերն արան քարուքանդ,  
Նազոն փալովը իմացաւ:

Հայ կին, երաշտ է անում,  
«Նուրի» շինիր ու շրջիր:

Փայ հաւաքիր տոպրակում,  
Էքսը առում չութ վարիր:

Հայ կին, ունես այլեայլք...  
Գնա խաչում նղաւիր,  
Պատգամ ուզեն շատուր այլք,  
Բառեր շարիր, գուշակիր:

Հայ կին, աղջիկդ է տնքում,  
Աչք է տուել դրացին,  
Տատն է հմուտ այդ բանում  
Պատրաստ ասեղը ձեռքին...

Հայ կին, գիւլումի կճճի  
Յողա—մայն սուրբ ջրից,  
Լցրու մէջը մատնոցի  
Ձախը ձախ,—աջ պտոյտը բեղմնալից:

Հայ կին, որ մէկը շարեմ,  
Հազար գիտեմ այսպիսիք,  
Կլնի՞ որ ձեզ նկարեմ  
Լուսաւորուած գեղադիրք:

ՄԱՆՈՒԿԸ ՇՕՐԸ.

—«Հայրիկ սիրելի, ամբողջ աշխարհում  
Ամեն մի բոպէ մանկունք են ծնվում,

Ինչո՞ւ չէ լցվում հապա մեր աշխարհ,  
Գատարկ անապատ դեռ որքան տեղ կար:

— «Ուղիղ ես դատում, մանուկ հարցասէր,  
Մարդերով աշխարհս անշուշտ կըլցուէր,  
Միայն մահ, հուր, սուր, ժանտախտ մահաբեր  
Մերժում են բնութեան այդ անբաւ հրաւեր:

— «Հայրիկ սիրելի, ամբողջ աշխարհում,  
Որքան կենդանիք են արտադրվում,  
Հապա էր սար ձոր՝ պիտան անպիտան,  
Անասնոց խմբի չէ դառնում կայան:

— «Ուղիղ ես դատում, մանուկ հարցասէր,  
Այդ քո ասութիւն իրաւ կըլինէր,  
Թէ մէկը մէկին՝ մարդը բոլորին,  
Կարեաց ազդումով միշտ չզոհէին:

— «Հայրիկ սիրելի, ամբողջ աշխարհում  
Որքան բուսականք են կեանք ստանում,  
Ամեն մի դարուն աճում բարդաւած,  
Գետնին խիւս տալիս իրանց մնացած:

— «Ուղիղ ես դատում, մանուկ հարցասէր  
Այդպիսով գետինը շատ կընդարձակուէր,  
Թէ անբաւ թուով անհուն շնչաւորք  
Կեանք ստանալում չլնէին տարփաւորք:

— «Հայրիկ սիրելի, ամբողջ աշխարհում  
Որքան մեծ գետեր են ծովը լցնում,  
Է՞ր մեր երկրագունդ չէ դառնում մեծ ծով,  
Ինչո՞վ կայ ցամաք, որո՞վ սպահով:

— «Ուղիղ ես դատում մանուկ հարցասէր  
Մեր այս երկրագունդ ծովի կըփոխուէր,  
Չլինէր ծնունդ եթէ ջերմութեան,  
Գետերն ու սահանքն ողջ աղբերական:

— «Հայրիկ սիրելի, ամբողջ աշխարհում  
Որքան ձեռք բանում, ճակատք են քրտնում,  
Այս մեր ընդարձակ բոլոր աշխարհում  
Հապա էր ողջը չեն հարստանում:

— «Ուղիղ ես դատում, մանուկ հարցասէր,  
Ամեն մի մարդի քրտինքը կօրհնուէր,  
Եթէ շուրջութեան անպիտան հոգին  
Չլինէր տիրած բոլոր աշխարհին:

ՄԻ ԵՐԵԿՈՅ.

Մի երեկոյ նստած էի  
Ձահեղների հետ մէլիանում,  
Քաթիպայի «Ազատ երգեր»  
Ոսկեղէնիկն էի կարդում:

Կարդում էի յարմարցնում  
 Լսողների տաք սկանջին  
 Իմաստալից դարձուածքները՝  
 Ռամիկ բառով թոյլ և չնչին:

Յանկարծ մէկը մեր ակմբից  
 Այսպիսի հարց առաջարկեց,  
 Փայլուն գինու լիք բաժակը  
 Երբ մինչ յատակը դատարկեց:

— «Մէթէ չունինք մենք թագաւոր,  
 Որ կարդում ես այդպէս բաներ,  
 Ել հերիք է առաջ գնաս,  
 Կրակեցիր դու մեր ջաներ:

«Ինչո՞ւ չունինք, ես խօսացի,  
 Կայսրն Ռուսաց ահեղագին,  
 Որդիասէր մի հօր նման  
 Մեզ տուել է իւր հովանին»:

— «Այդ ես գիտեմ, աօ դու լիմար,  
 Հայախօս իշխան եմ ասում,  
 Ուրիշ երկրում օտար հողում  
 Սր հային լինի պաշտպանում:

Երեսունից աւել տիրողք  
 Գու հաշուեցիր երկրագնդում,  
 Գէթ մի հայ էլ չկայ հապա  
 Այդ վեհերի փառքոտ շարքում:

Գու խաբում ես, ես լսել եմ,  
 Լաւ չեմ լիշում թէ որ երկրում,  
 Հայի հաւատն է տարածուած,  
 Այնտեղ հայն է թագաւորում»:

Միայն ծիծաղ, կողծակ ծիծաղ  
 Այդ յայտնութիւն ինձ նուիրեց,  
 Աշխարհագէտ մեր լիմարը  
 Ամաչելուց հազիւ թէ լուեց:

«Ես քեզ կասեմ, իմ սիրելի,  
 Թէ որ երկրում և որ տեղում» —  
 Տգիտութեան մայր քաղաքում  
 Է քո հայը թագաւորում»:

ՅՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԱԻՆՐԱԿՈՒՄ.

Ի՞նչ ունիմ, ինչ տամ, ո՞վ սրբազան վայր,  
 Աւեր դրութեանդ խուն ինչ սփոփանք.  
 Տառապեալ ծերուկ, որդեկորոյս հայր,  
 Ի՞նչ տամ քեզ միխիթար. — շինեմ ինձ պարծանք:  
 Վերապատուելի այդ արձաններին  
 Ի՞նչ ձօնեմ նուէր, պարտքս կատարեմ,  
 Հայրենեաց ձրքի յիշատակներին  
 Ի՞նչ պատիւ տա՞ծեմ — խորշոմքը շպարեմ:  
 Վեհ գեղարուեստի այդ բեկորներին,  
 Դիտապատ ընկած ծաղկեն կարներին,

Հոյակապ—կիսեղծ հայկեան տառերին  
 Ո՞րպիսի ընծայ տամ ես մեծագին:  
 Մահամերձ դիմօք, սկզբու երկնաշուք,  
 Ի՞նչ ես թախանձում աղքատ սուտորից՝  
 Ունի նուիրել լոկ զոյգ արտասուք  
 Մամուտ սեղանիդ՝ իւր հոգու խորքից:

ԳԵՂԱՄԱՅ ԾՈՎԻ ՄՕՏ.

(Անցեալի յիշողութիւն)

«Յուլն, արև, վանիւր ամպեր խաւար երկնքից,  
 Թօթափիւր քեզ միանգամայն մաշող տանջանքից,  
 Ընկէք, ալիք հանող հողմեր, չորեք անկիւնից,  
 Քիչ նիրհեցէք, յետ կասեցէք անմիտ բաղձանքից:

Հանգիւր, ծովակ, մեղմ հորդան տուր անուշ ալիքով,  
 Խաղաղ դէմքիդ ակօսները բարդիւր քով է քով,  
 Եկէք ի տես, ոսկեայ ձկներ, թնչ էք յապաղում,  
 Ծովին թիկնած, սիրով վառուած երկաթն է կուռում:

Կապույտ ծովակ, էր վախեցար, գոյնդ փոխեցիր,  
 Այն ապակեայ կերպարանքդ կարմիր ներկեցիր,  
 Երկէջ առար բոմբիւններից արդեօք ահարկու  
 Թէ ներկուեցիր վարդի գունով իբր արիւննարբու:

Վանդակապառ թէ յովազի զարգը քեզ ազդեց,  
 ր այդ տխուր մակերևոյթդ յաղթութեամբ սլտակեց,

Թէ տեսնելով նուիրմունքը առիւծ քաջերին,  
 Ռոպէական ցնցում տուիր քո կերպարանքին»:

Ծովակն, անուշ ալիք հանեց, աղի արտասուեց,  
 Յափշտակուած գերավարիս երկու խօսք ասեց.  
 «Այդ արկածներ եկան անցան, առան ստուար ծածք,  
 ձեպիւր այլուր, դիտիւր ցաւով, դու նորոգ արկածք»:

ԱՒԵՐԱԿԻ ՈՒՐՈՒՍԿԱՆԸ.

Ալիքն երեսին, կնճիւր ճակտին,  
 Ինձ դիմաւորեց մի բարկ հայնայքով,  
 Այց էի ելել երբ աւերակին,  
 Երբ շրջում էի հինը քննելով:

Ես նպատկառանքից եղած յաղթահար,  
 Մինչդեռ կամեցայ խոնարհ բարևել,  
 Սուրբ աւերակից զարձած աղբահար,  
 Անցեալի համար մի բան հարցնել:

Հեզնական կերպով նա քիչ ինձ նայեց  
 Իբրև մի ապուշ—բայց իշխանաւոր.  
 Իբրև իւր ճորտն էի, երես դարձրեց,  
 Քայլում էր ճեմով մտածմունքաւոր:

Ես յանդգնեցայ (ոյժս էլ կըսատէր)  
 Հարց առաջարկել մռայլ ծերուկին.

Մենք մենակ էինք չորս կողմն անտառ էր,  
Տաճարի քամին սուսում էր քամին:

«Խնդրեմ, ո՞վ ծեր պապ, փոքր ինչ զիջանիլ,  
Օտարին պատիւ, այդ դուք լաւ գիտէք,  
Թշուառ քարերից, ինձ մի բան պատմել,  
Այդով պատմութեանը՝ կօժանդակէք»:

Ծերուկն անմուռնչ, ինչպէս նկատեցի,  
Հոգեպէս ցնցուեց, սաստիկ զայրացաւ,  
Կրճքին զարկելով արաւ նշանացի  
Կատաղած կերպով և կուրծքը բացաւ:

Ձարմանք ինձ պատեց. երկաթեայ կրճքում՝  
Դղրդուած հոգով այսպէս եմ կարդում՝  
«Ես աւերեցի իմ հզօր ձեռքով  
Գրտնքի պտուղ այս վեհ շինութիւն,  
Այն մեծ պատմական հատու բրէնով.  
Ինձ անուանում են «սև ատելութիւն»:

ԻՄ ՎԱՐԴԻՆ.

Ծերացիւր, էյ փարելի վարդս, թոշնիւր, թառամամիւր,  
Գունատուած զառամիւր,  
Թո՞ղ ողբայ, հեկեկայ աւերող երգերով երկնաձիւր  
Բիւլբիւլը ցաւակիր.

Ձոհուիւր լիովին ամբան անգութ կիզող շոգերին—  
Կենսահատ թոքերին.

Անցաւ Մայիսը, յունիսեան խորշակները լափիւր,  
Թերթիկներդ թափիւր:

Սիրահար սոխակը դուրս կըգայ գեղիդ այցելու,  
Կարմիր վարդ հայցելու.

Կըտեսնէ գէնքերդ բութ ոստիկներդ անզինակիր,  
Չի կարդալ սիրոյ գիր.

Ել անձրևն անգօր է նոր ի նորոյ քեզ կեանք շնորհել,  
Այդ կեանքդ կաղդուրել:

Վերջին անգամ կենառիթ բուրաստանդ բարևիր,  
Վշտալիւր հեռացիր,

Քամուն տուր մետաքսեայ փայլուն առէչք պսակներդ  
Դժգոյն թերթիկներդ,

Յրուիւր երկրազնդում թռչող ամպերին մածիր,  
Տիեզերքն օծիր,

Սիրազուրկ սոխակը թող անկեանք թփերիդ տակին  
Աւանդէ իւր հոգին,

Աճիւնդ լինի նորան ամբիծ—հանդիստ գեղադիր,  
Բաղդեր ոչ պատիր:

ՀՐԱԺԵՇՏ.

Հեռանում եմ քեզանից, ո՞վ իմ պաշտելի,  
Արտասուքը աչքերիս, թախիծները կրճքիս,  
Դղրդուած վշտերից, լիմարուած հոգով ցաւալի.  
Փուշ տատասկ կարծելով—ինձ անյայտ ուղիս:

Սյնտեղ ես կամաւ կրբանտարկուեմ,  
 Այդ անխուսափելի հարկն է պահանջում,  
 Մեծ լուսաւորների ու ամպերի հետ քեզ բարև  
 կըզրկեմ.

Կըլիշեմ սխրալի անցեալքը անկշտում:

Երբ արեգակը ճառագայթէ իւր շառաւիղները  
 քեզ վերայ,

Իմացիւր, այդ սրտաբուլղիս բարևս է թափում.

Երբ լուսինը սաւառնէ բացօթեայ անկողնումդ  
 քեզ վրայ,

Իմացիւր, այդ սլացած հոգիս է քեզ նուիրվում:

Երբ ամպերը զիզուեն, արտմեն, թափեն ցօղ գե-  
 դաշուք,

Իմացիւր, այդ է իմ ծովացեալ ահանց արտասուք.

Իսկ երբ խաւարին լուսաւորները, ամպերը որոտան,  
 Իմացիւր, գերիդ հատաւ կեանքից, մտաւ գերեզման:

Ե Ի Ի Ն Չ ՈՐ Ի.

Եւ ինչո՞ւ չեն բախտաւոր՝  
 «Շամպայն», «խերէս», «մադէրը»,  
 Եւ ինչո՞ւ չեն բեղնաւոր՝  
 «Պօրտ—վէին», «րէյն—վէյն», « սօդէր»ը:

Գեղջուկ աղքատ երեխայք,  
 Դոցա մի շիշը ձեր մէկին,  
 Ես կըհաշուեմ շատ վստահ՝  
 Ամբողջ տարուայ ուսման զին:

Եւ ինչո՞ւ չեն բախտաւոր  
 «Չեստէր» «գամբուրգ» խորթ «կոզին».  
 Եւ ինչո՞ւ չեն բեղնաւոր՝  
 «Պալիկ» «իկրայ» ու «սարդին»:

Գեղջուկ աղքատ օրիորդք,  
 Այդ պատուէլեաց մէն մի ֆունտ,  
 Ամսաթոշակ անպակտորդ,  
 Կըտայ ձեզ մտքի սնունդ:

Փայլուն Աղայք, դուք ֆրանտ,  
 Իէթ քառորդ ամ ծալեցէք  
 Եւրոպական պրէյիսկուրանտ,  
 Տեղականով ապրեցէք:

Ձեր ապերախտ ու անգոհ  
 Յայնժամ փորի փոխարէն  
 Մանկուէք կըլինին ձեզնից գոհ՝  
 Ընկած թշուառ գեղերէն:

ՔԱՂԱՔԱԳԻԼԻԻ ԱՅԾԸ.

Մեծ քաղաքի մէջ, շքեղ պալատում,  
Երկիրն ըստանձնող մարդերի կարգում,  
ձոխ, շուայլ, հարուստ կեանքի հոսանքում  
Մի քաղաքագլուխ էր խաղաղ կեանք վարում:

Ծառայ ընտանեաց, աղախնեաց շարքում  
Նա մի խատուտիկ այժ էր խնամում,  
Ոսկեայ գանգակիկ մետաքսեայ կապով  
Կրում էր գեղ այժն իւր պարանոցում:

Իէր, հպարտ այժին՝ իւր նախահարց պէս,  
Չէր երկնչեցնում, գայլ—գողի հանդէս,  
Սիգական փայլով ճեմէր շուկայում,  
Յարգուած, ճանաչուած ամբոխի աչքում:

Ալլափ ու բաղկալ, հացթուխ, խոհարար,  
Չսպել լիրպ այժին—էին միշտ անկար.  
Յանկացած պատառն էր անոյշ անում,  
Ընդդիմանողին աքացի զարկում:

— Հը, ձայն չհանես, մեծ ուստաբաշի,  
Եթէ ոչ կերթայ քամակիդ կաշի.  
Այդ քաղաքագլխի այժն է սիրական,  
Իւրեանն է բոլոր աչքին զիւրեկան...

ՈՅՆ ԻՐՆՁ ՍԻՐՏ ԷՐ.

Այն թնչ սիրտ էր իմ կրծքիս տակ բարբառում,  
Որ չգիտէր ոչ գանձ, ոչ փառք, ոչ Աստուած.  
Այն թնչ կեանք էր գոյութիւնս պահպանում,  
Որ առանց կուր «սէր»ով էի լաղեցած:

Այն թնչ իղձ էր վառ ցանկութեամբ պարարուն,  
Երանաւէտ, որ ինձ յոյս էր ներշնչում.  
Այն թնչ փափագ ողջ լիութեամբք պատարուն,  
Որ անվաղձան ինձ սուրբ բախտ էր աւետում:

Այն թնչ օր էր գարնան, որ դաշտն ու արև,  
Ինձ՝ կարծեցնէր մետաքս, ոսկի թանկագին.  
Այն թնչ գիշեր, լուսին աստեղքն ակներև  
Համարուէին արծաթ, գոհարք ինձ բաժին:

Այն հրաշք էր չնաշխարհիկ գերբնական,  
Մտառը կեանքի նօրան սէրն էր ստեղծել.  
Մոխիր կեանքին առհաւատչեայ երկնական՝  
Այն մարգասէր երկնից Պետն էր պարգևել:

Բայց զանուան ընութեան ոսոխ սև հոգիք,  
Բանադրեցին այդ երկնաշունչ որ հրաշք.  
Օրապակաս վիժած, հոգով փուռ մարդիկ—  
Եղեռնազատ, որ վճռեցին այդ արարք:

Եւ ջախջախուեց սիրոյ ոսկեայ այն շղթան,  
Վեր բարձրացաւ, գնաց իւր սուրբ օթեան.  
Չանձրացնող խաւարն առաւ իւր ծաւալ,  
Սէրն ամփոփեց կենսատարափ իւր ծաւալ:

Գնն հանգիր, էջ նահատակ, այն վայրում,  
Ուր՝ ազատ կեանք, խաղաղ դարերն են իշխում.  
Այն սուրբ վայրից խաղաղութեան հրեշտակ  
Ներքև դարկիր, որ ինձ առնէ իւր գաւակ:

Սրգարութեան երիվարին մենք հեծած,  
Ոգի՛ք տարերք թողունք փոշուն մեր ապշած.  
Գանք ժամանենք սիրոյ ստղեծած այգ կայան,  
Առնու լրութիւն, այն երկրադաշն հաւատչեան:

ՈՂՋՈՅՆ ՏՈՒԷՔ.

Ողջոյն տուէք գեղեցկուհուս  
Փայլակնացայտ աղունքներուն,  
Ողջոյն տուէք հերոսուհուս  
Մարդակործան վառ գէնքերուն:

Ողջոյն տուէք ինձ սպանող  
Սիրահարիս ժայռ կամքերուն,  
Ողջոյն տուէք սուրբ երկնացող  
Հոգեհանիս ժպիտներուն:

Ողջոյն տուէք արուսեակիս  
Շանթահարող ինձ կայծերուն,  
Անլոյծ կապանք թշուառ զոհիս  
Սլեծածան գիսակներուն:

Ողջոյն տուէք, համբոյր տուէք  
Պանդիտուհուս շրթունքներուն,  
Ողջոյն տուէք, յարգանք տուէք  
Նորաբողբոջ ստինքներուն:

Յարգանք տուէք խոնարհական  
Չաստուածուհուս պատգամներուն,  
Պաշտօն տարէք ծառայական  
Նորա փայլուն հրամաններուն:

Ողջոյն տուէք իմ վարդուհուս  
Օտարաձայն սոխակներուն,  
Ուշք տալ տուէք կոյր աչերուս  
Սրիւնասահ կոհակներուն:

Ողջոյն տուէք ազատուհուս  
Իշխանական մրցումներուն,  
Յիշել տուէք նազելուհուս  
Իրեն թշուառ նախկին գերուն:

ԾԱՂԻԿ ՀՈՏԱԻՆՏ.

Ծաղիկ հոտաւէտ բալասան անգին  
 Տատրակ միամիտ խնջոյքի միջին,  
 Առաջին անգամ երբ պատահեցաք,  
 Սիրոյ հետ հոգիս, կեանքս ըստացաք:  
 Ձեզ կեանք հաշուեցի թշուառիս համար,  
 Թէկուզ վրդովուեն մարդիկ անհամար,  
 Ձեր մի սուրբ հայեացք անկիւնի խորքից  
 Տապալեց պոկեց հոգիս իւր տեղից:  
 Ժամեր են անցնում, այդ հուր է անկէզ,  
 Պարիլն է գալիս դահլիճում հանդէս,  
 Գարմօն եմ ածում, անուշս է խաղում՝  
 Կաքաւի թռիչքն սիրտս է գրաւում:  
 Ա՛խ, ոստոստում է, առնում է պոռոյտ,  
 Ծորում է ժպիտ, դառնում շուտափոյթ.  
 Ո՛հ, թագուհի է գեղեցկաց խմբին,  
 Տիրող պատուաւոր ամբողջ ակմբին:  
 Ձեմ յոգնում ածել, գտնում եմ ձեւեր,  
 Միշտ կլանում է ողջ եղանակներ,  
 Ես մտածում եմ «ո՛հ, այդ սէրն արաւ»,  
 Որ հոգի կտրած թռչում է իրաւ:  
 Գարմօն եմ ածում թռիչք հրեշտակի,  
 Ոստիւն կաքաւի, հազուստներ դահճի.  
 Ո՛հ, սարսափում եմ, սիրտս է մորմօքում  
 Հայեացքով խեղդում, սիրահեղձ անում:

Ա՛խ, ես յոգնեցայ, անուշս տեսաւ,  
 Իւր նկատելուց հոգիս վշտացաւ,  
 Ծնորհալի նագով գլուխ է տալիս,  
 Հոգիս հրդեհուեց նրա հեռանալիս:  
 Ո՛հ, հեռանում է անկիւնը քաշվում,  
 Կրկին նորոգուած պարն է սկսվում,  
 Էլ ես ոյժ չունիմ ոչովին նայել,  
 Միայն անկիւնն է հոգիս գրաւել:  
 Ասան, իմ անգին մանեակ ոսկեշար,  
 Եղնիկիդ սիրել կըլինի՞ հնար.  
 Թէ չես դու հրեշտակ կարիք կունենաս,  
 Ինքնակամ գերուդ սիրտը կիմանաս:  
 Խնջոյքը անցաւ, գարմօնը լուեց,  
 Ժամանակ սահեց, հանդէսը ցրուեց,  
 Արթնութեան երազ դառաւ անկիւնը,  
 Գեռ միշտ կըկտրէ անկիւնն իմ քունը:

ՏԱՐԻՔ ԵՐ ԱՆՑԵԼ.

Տարիք էր անցել քեզ չէի տեսել,  
 Ո՛վ իմ նագելի, իրական աչքով,  
 Հետդ գրուցել, վարսերդ շոյել  
 Էի միայն քնով երազով:  
 Ահա՛ կանգնած եմ սեամքիդ առաջին,  
 Ամօթխած դէմքով իբրև մուրացկան,  
 Պէլ կտրած ապշած ինձ գերող դէմքին՝  
 Մըցողին՝ բոլոր փայլուն լուսնկան:

Խօսէ, իմ անգին, տուր զէթ մի բարև,  
Կեռ գեղիդ գերի անբախտ ասուորին.

Թող իւր կորուսած պայծառ լոյս արև,  
ձառագայթ շնորհէ զրկուած դաշտերին:

Նախշունը խօսաց. Ուր կերթաս, սասց.  
Ասացի զօնախ մարտի մեծ գաշտին.

«Քեզ քօմագ եղնի պատկերն Եօթվիրաց»,  
Այդ մաղթանքն էր անդ նեցուկ իմ կեանքին:

ՄԻՆՁԵՒ Ե՞ՐԲ.

Մինչև երբ, անմահ, ով վեհ մարդ Աստուած,  
Քո սպասաւորներ լոկ ձևը պաշտեն,  
Հոգի ու հաւատ իսպառ մոռացած,  
Անյազ գայլերին յագուրդ պատրաստեն:

Մինչև երբ, ով Պետ — «տէր տէր» ասելով,  
Քո սուրբ փրկառւիթ խօսքերը եղծեն,  
Միայն շրթունքով լոկ ձևի համար  
Երևոյթական քեզ պաշտօն տանեն:

Մինչև երբ, աներբ, հաւատքիդ հրեշտակք  
Փառասէր կրքով ինքեանց մեծացնեն,  
Իբրև ճշմարտի շինծու երկուորեակք  
Անձներն՝ ամբօխին՝ Աստուածացնեն:

Ել սրսկիր յերկիր — անբաւ մարդասէր,  
Երկրին անծանօթ հոգոյդ սրբութիւն,

Անդունդ գլորիբ հոգին մեղասէր,  
Սուրբ աւետմունքդ առնու լրութիւն:

Տուր կարողներին, Աստուած անքննին,  
Մարմնոյ հետ՝ հոգւոյ մտածողութիւն,  
Որ ընծայ բերեն ողջ տիեզերքին,  
Սար ու ձոր լցնող կամքիդ գիտութիւն:

Ի՞ՆՁ ԵՄՆՅՅԱՐ.

Ի՞նչ շահեցար սրտանց պաշտած  
Քո փաղաքուշ չաստուածուհուց,  
Փուժկալութեան համեստն Աստուած,  
Որ զոհեցիր նորան վաղուց:

Երբ հնար էր դեռ ուղղուել,  
Տիրել՝ շուրջ շոգմոդ կեանքին,  
Աշխարհի մէջ մարդ համարուել,  
Վանել լիմար քաղցկեղ ջանքին:

Ի՞նչ շահեցար, որ շուրջեցիր  
Անտրիտուր բնութեան պարզև,  
Հոգի-մարմինդ քայքայեցիր,  
Հուր շինեցիր կեանքիդ արև,

Որ ներգործեց անժամանակ,  
Վերք շնորհեց քեզ անդարման,  
Եիր ջահիլ դեռ պատանեակ,  
Քեզ պատրաստեց մուժ գերեղման:

Այդ շահեցար դու, միայն այդ,  
 Որ մահուան իդձ ստեղծեցիր,  
 Թախանձանքով վշտերացայտ,  
 Որ մահուան գործն արագացրիր:

Բայց անգութ էր մահն անիրաւ,  
 Դեռ չէր կամում քեզ հիւր լինել,  
 Կարճել կեանքդ կենսազրաւ,  
 Տանջանքներիդ հանդիստ շնորհել:

ԿԵԱՆՔԻՑ ԶՐԿՈՒՈՂ ՍԻՐԱՀԱՍՐԸ.

Արի գրկեմ վերջին անգամ,  
 Մանուկ կեանքիս, էլ մահառիթ,  
 Լսեմ խօսքերդ ինձ սուրբ պատգամ,  
 Ուրախութեանս միակ առիթ:

Այս մնացած ջախջախ կեանքիկս  
 Հրամաններիդ նուէրք բերեմ,  
 Փայլերազուրկ փոքրիկ աստղիկս  
 Պարզ երկնքումդ պատսպարեմ:

Այդ իրաւ է, կեանքս է ինձ թանկ,  
 Դուք էլ թանկ էք բայց ինձ նոյնչափ,  
 Արի հօտէ, էլ, սիրոյ հանք,  
 Իմ պաղ կրծքին, քո սէրն անչափ:

Թէ կարող է նա աքսորել  
 Իմ անկողնուց անգութ մահին,  
 Գէթ կեանք՝ ժամով կրպարարէր  
 Կեանքից զրկուող սիրահարին:

Մահ էիր դու, ո՞վ սէր և կեանք,  
 Նուիրական հոգիներին,  
 Օրահասական ունէ տանջանք  
 Քեզ միշտ պաշտող քո խեղճ գերին:

Արի սփռէ քո սուրբ թուեր,  
 Կամ ցանկալի կեանք տարափիր,  
 Երևեցո՞ քո փայլ պատկեր,  
 Կամ առ հոգիս, երկինք թռիւր:

Այս փոքրիկ կայծ այրող սիրոյ,  
 Այնտեղ է բուն մեծ կայանք,  
 Գնա՞ դարձիր սկզբնականին,  
 Փակիր այս թոյլ տանջարանք:

ՓԱՅԼՈՒՄ ԷՐ ՀՈԳԻՆՑ.



Փայլում էր հոգին անմեղ ժպիտով  
 Գարնան պարզ եթեր այն դեմքի վերայ,  
 Կեանք իրագործող հազար առիթով,  
 Խնձղանք արափում անզույգ գերակայ:

Որպէս փայլ գարնան տարափն անձրեւին  
Մեղմիկ հասանքով ծաղկունքն է թրջում  
Հայեացքը անմեղ սիւն էր սրտերին,  
Որոնք ջախջախված, Նոր կեանք են հայցում:

Ստեղծուեց յանկարծ իմ մէջ վառ տենչանք,  
Երբ հրաշք գէմքին ակունքս յառեցան,  
Գտնուլ նորն մէջ իմ փառքի բաղձանք,  
Նորանով առնել բիւր վշտերըս ցիր ցան:

Եւ կենդանացան իմ մէջ յոյս, հաւատ,  
Մկրտուեց կեանքը մաքրագոյն սիրով,  
Բեղմնուտ ուռճացաւ իմ հոգին վհատ  
Սյլ չէի հայցում կեանքին ստսկիւնով:

Ո՛վ, սովորոյթն էր, թէ անկար բնութիւն,  
Որ իմ սուրբ բաղձանք մնաց անգնահատ,  
Ոսկեղէն ուժով, գործուեց բռնութիւն,  
Անյարիր եղծաւ իմ աղնիւ հաւատ:

Եւ բնութիւնք իւր յատուկ ուժով,  
«Միրուիլ» դուրս կորցեց խեղճ ստրկուհուց,  
Զմոռեց, ատելը մոռացութիւնով,  
Ազատ ցանկութիւնքը մեռած էր վաղնւց:

ՏԵՍԷՔ ԻՆՉ ՈՒՆԻՆՔ.

Ել ինչո՞ւ ստենք, տեսէք ինչ ունինք՝  
Նախապաշարուած, նահագեփտական  
Ծոյլ երկրագործներ, չիմար տնտեսներ,  
Անմարդ տղէտներ—շահի ստրուկներ,  
Զարդուած հոգիներ—ապուշ երկչոտներ.

Ել ինչո՞ւ ստենք. գիւղում այդ ունինք:  
Ել ինչո՞ւ ստենք, տեսէք ինչ ունինք՝  
Բարին ուրացած անբարոյական  
Անարդ ուղղորդներ, թմբած հովիւներ,  
Վատ, կաշառակուրծ—գէշ գատաւորներ,  
Ապուշ բոշաներ—միշտ խաբեբաներ  
Ել ինչո՞ւ ստենք. գիւղում այդ ունինք:

Ել ինչո՞ւ ստենք, տեսէք ինչ ունինք՝  
Անկեալ մոլորուած—մերթ անասնական  
Անել գերիներ, ստրկուհիներ,  
Կեանքին անընտել—լսկ վայրենիներ,  
Լոյսը ատողներ—մութը պաշտողներ.  
Ել ինչո՞ւ ստենք, գիւղում այդ ունինք:  
Ել ինչո՞ւ ստենք, տեսէք ինչ ունինք՝  
Հոգով կուրացած—միայն մարմնական  
Գող սրիկաներ—լափշտակողներ,  
Պատուին անծանօթ, երախտամուռներ,  
Շողոքորթողներ, պարտազլացներ.  
Ել ինչո՞ւ ստենք. գիւղում այդ ունինք:

Ել ինչո՞ւ գաղենք, որ մենք պէտք ունինք  
 «Գործող» որերի, ժիր հովիւների,  
 Մեծ հոգիների, պայծառ մարդերի,  
 ժիր գործողների, անկեղծ լաւերի,  
 Կրթեալ մայրերի, սուրբ տաճարների.  
 Որ իցէ յայնժամ ասենք բան ունինք:

ՄՈՒՈՒԹԵԱՆ ԲԼՈՒՐ.

Մուլութեան բլուր, կործանուիր հիմքից  
 Քո շքեղ պատիր ողջ տաճարներով,  
 Կրակ դուրս վիժիր խորին անդունդից,  
 Տապալվիր ընկիր քո սուտ քուրմերով:

Խղճալու արժան ապուշ հոգիներ  
 Որ ել չկարծեն քո մէջ ծրարած,  
 Պաշտաման բախտի լիառատ հանքեր,  
 Մարդկային պատիւը յերկիր կործանած:

Մուլութեան բլուր, երկաթի կարկուտ  
 Զգիր գէպի քեզ, նախանձոտ Տէրից,  
 Քո դէք, քո բազէնք որ լինին շարդ-փուրթ,  
 Կառնան հող, մոխիր, խլուեն արմատից:

Որ մոլեծնունդ երգեր ու պարեր  
 Զշարունակուին, առնուն կատարած,  
 Որ փող ու թմբկի արբեցնող ձայներ  
 Լռեն որսալուց, մնան վհատած:

Մուլութեան բլուր, շարժուիր յատակից,  
 Ընկիր ծովի մէջ հպարտ գլխակոր,  
 Տար քո պաշտօնեայք քեզ հետ աշխարհից,  
 Եօշափիր յատակը ծովի—[Թաւ գլոր:

Որ քո սև պաշտպանք քեզ հետ վերջանան,  
 Տեղի տան պայծառ արգար նորերին,  
 Որ քո զոհ ու խաւնկ, ճենճեր չքանան,  
 Տեղի տան «սրբոց աղօթք»ներ խնկին:

Մուլութեան բլուր, զեղև կեանքի պաշտպան,  
 Առատ աշխարհի դիւթող գինիով,  
 Ենթարկուիր մուրող դու աղքատութեան,  
 Թույլերն զբաղուեն թող աշխատանքով:

Որ աղքատութիւնն չքանայ երկրից,  
 Մերժուի այն անմիտ հրաշքով ապրուստ,  
 Կիմաղիր ճակատը՝ թրջուած քրտնքից,  
 Որ առնու օրհնանք ոչ պատիր՝ յերկնուստ:

Երկրպագութեան որ սուրբ առարկայ  
 Կառնայ աշխարհում վաւեր գիտութիւն,  
 Որ նրա տաճար ողջից Կերակայ  
 Ոտքէ, տրորէ խաւար մարդկութիւն:

Որ կենդանեաց փոխ մտքերը զոհուեն  
 Կենսատու արգար ուղիղ գիտութեան,  
 Որ խնկերի փոխ հոգիքը ծխուեն  
 Մարդին մարդ առնող նրա վեհութեան:

Որ լերանց վերայ չերկրպագեն  
 Տէր եհովուային շողոքորթութեամբ,  
 Միակ տիրողին գլուխ խոնարհեն,  
 Մաքրագոյն հոգով ու ճշմարտութեամբ:

Հազար տարին օր, օրն հազար տարի,  
 Ասուր, խատասող քնչ, էր ես վաղուճ,  
 Մոլութեան բլրան ընթացք ոչ բարի,  
 Տէրն է թոյլ տալիս, Տէրն է կործանում:

ԱՆՄԵՂ ԵՂՆԻԿ.

Ո՛վ անգութ որսորդ, անմեղ եղնիկիս  
 Քանի՛ հարածես սուր ու հուր ձեռքիդ,  
 Քանի՛ հետևես ի քէն խուսափողիս,  
 Այժ ու զօրութիւն տալով ոտքերիդ:

Ո՛ր գանդատաւոր քեզ երէտ խնդիր,  
 ձառելով իրան կրած վնասից,  
 Կամ ո՛ր զբնուած կեանքով ցաւալիր  
 Յօղեց տարափեց քեզ արտասուքից:

Մատաղ ոստիկներ Չահլի ծառերի  
 Եղան վեհիդ մօտ արդեօք ամբաստան,  
 Թէ՛ չքնաղաչիւս ծիլլ ծաղիկների  
 Խնդրել խնդրեցին ի քէն դատաստան:

Արդեօք վտակներ պարզ ու գալարուն  
 Յողնեցան տալ կեանք ինձ տօթ ու շողում.

Արդեօք խոտիկներ ցօզով պարարուն  
 Պատժել կամեցան փորիկս անկշտում:

Եւ կամ արդեօք դու էիր սիրահար  
 Իմ հեց ու հանդարտ փայլեցիկ դրութեան,  
 Խոյս տալուս համար, որ ինձ հրահար  
 Կամէիր առնել փաստով մոլութեան:

Ո՛չ, իմ կենսատուք կըխնայէին  
 Եղծել ու խլել իւրեանց ստեղծած,  
 Եինել ու եղծել՝ կարգն է բնութենին,  
 Սահմանադրական է, բայց իւր գործած:

Հնա՛, դուր փորձեր քեզ՝ չխրատեցին  
 Զգել յագենալը անմեղ արիւնից,  
 Մաքուր արիւնը, դեռ կեանքն անմեղին  
 Զուտ արեան շուրջը է քեզ կարեկից:

ԳԻԻՂ ԱՅՈՒՆ.

Զարկիր, հայհոյիր անասուններին՝  
 Պօռիկ գոմշուկին, մշակ եղներին,  
 Թափիր անարգանք, բրտնքոտ գեղջուկ,  
 Անասներից յետ՝ քո ծոյլ բուժ մանչուկ

Ա՛ռ ոտքիդ տակը, ծեծիր մահամերձ  
 Մօր հետ միասին, և կուռով անվերջ  
 Յառաջ տար կեանքիդ կուռի բուն անիւր,  
 Ապրուստ չէ լինում անկագ, անկուռ:

Վերջ պիտի դրած բայց այդ դրուժեան  
(Եւ լուսոտ ներկան այդ է պահանջում),  
Որ հասցնում է մարդին անասնութեան,  
Մարդի վեհութեանը՝ զարկում սպանում:

ԿԱՆԱՑ ՍԵՌԻՆ.

Գեռ սպանիրք՝ հոգոյ մեջ, ո՞վ մարդկութեան ամբողջ կէս,  
Գերազնիւր և ցանկալին— փակէ մրցման քո կրկէս.

Գեռ խարխափիր ըստրկօրէն, փակուած մանուկ աշխարհում:  
Հում:

Ամբողջութիւնդ նախապաշար, գեռ դրսինդ է փայտայտում:

Հանգիստցիր գեռ մեղմամար՝ քնքոյշ հոտով պալատան,  
Վայրի, յամառ անդուսպ կրքին, անվերջ հոգսի գերասան.

Գեռ նախնական կրիւր քո լուծ, խաղաղ հանգիստ ան-  
մուռնչ:

Ի՞նչ հարկ գետնից յարուցանել՝ իրաւունքի սուրբ  
տրտունջ:

Կըգայ մի օր բնական կարգը կըտանէ իւր յաղթանակ,  
Գաղան կիրքը միշտ չի ստանալ փառք ու գովեստ, մրցանակ.

Գարբը կանցնեն իրաւուրը հոգի կառնէ և մարմին,  
Համատարած կըհռչակուի— հաւասար են այր ու կին:

ՍԷՐԸ ՍԱԿԱՐԵԱՆ.

«Արի ինձ սիրելի, ես քեզ սիրում եմ,  
Սէր փոխանակենք, երջանիկ լինենք»

Յմահ կըսիրեմ, անսահ, երգվում եմ,  
Սիրով երկուսէս մի մարմին կազմենք:»

— «Ի՞նչ է ձեր սէրը, ըոպեական բախտ,  
Այդ պլատօնական ախտը թնչ անեմ,  
Թէ ունիս կալուածք, զոյք, գանձ անսպառ,  
Իցէ թէ յայնժամ ես քեզ կըսիրեմ»:»

Պճնասիրութեան դեւին վաճառուած  
Ժամանակակից հերոս գեղեցկից  
Այսպէս պատասխան հարցիս ստացայ  
Սէր, սէր էի հայցում երբ ես նրանից:

Ամբողջ աշխարհը մթնեց իմ գլխին,  
Երբ անգին սէրը տեսի սակարկած,  
Մարմին էր առել աշխարհի հոգին,  
Թէ ոչ սրտեղից անբնական արկած:

ԳԵՂՋՈՒԿ ՀԱՅ ՕՐԻՈՐԳ.

Ես քեզ եմ սիրում, ո՞վ հայ պատանի,  
Իմ կեանքին, սրտին, հոգուն ընտանի,  
Մթին անկիւնում, իմ անել բանտում  
Խելագար դիրքով ես քեզ եմ սիրում:

Իմ մտածմունքներ, իմ նինիւր երգեր  
Հեռու է ինձնից, երբ մեծաց ստուեր,  
Քե և են զբաղուած, միշտ քեզ են լիշում,  
Քո վայելչաձև դիրքդ ակնարկում:

Գուժանում, կալում քո «Հորովէլները»  
 Հոգումս են թագչում այդ սիրոյ ձայներ,  
 Սիրել ու սիրուել ինձ չէ համարձակ,  
 Գաղտուկ եմ պաշտում քեզ, ով իմ հրեշտակ:

Նոր ծիւծիւ բեղեր—վարդի թերթիկներ,  
 Պայծառ փայլ աչեր, թուխ գանգուր մազեր,  
 Ամուր թե թիկունք, շնորհալի շարժում  
 Սոսկալի կերպով ուշքս են զբաւում:

Ինչո՞ւ ոչ մի բան աչքիս չէ ընկնում՝  
 Հէրն ու մէր, տուն տեղ և ոչ պաճուճանք-  
 Հաց, ջուր մոռացած, էր քեզ եմ յիշում,  
 Կրելով հոգումս ճնշում ու տանջանք:

Ես դեռ անգէտ եմ այս հարցեր վճռել,  
 Միայն գիտեցածս ուղիղն եմ ասում.  
 Հարուած, զան, մախանք չեն կարող զատել  
 Ինչ որ վճռել եմ, շատ վաղն իմ հոգում:

ԵՍ ԻՆՉ ԵՄ ԱՆՈՒՄ.

Յղացած ամպեր վերին սահմանում  
 Լիառատ ջրհոսք իւրեանց կենդրոնում  
 Տօթակէզ դաշտիս երբ չեն ոռոգում,  
 Այդ ջրի մեծ պաշար ես թնչ եմ անում:

Գեղեցիկ այգի բիւրաղք բոյսատած  
 Ծառերով, ծաղկով համակ զարդարած

Երբ վարդ խնդրողիս չէ հիւրընկալում,  
 Այդ փայլ գեղաստան ես թնչ եմ անում:

Յողատարափ դաշտ, վառ ծաղկանց բարդիւն,  
 Բնութեան կանաչ գորգ, գեռնոց խուլ հնչիւն,  
 Թռնոց կեանքոտ խաղ երբ չեն սփոփում  
 Անսփոփ հոգիս, ես թնչ եմ անում:

Գարնան հովախնամ ալեւոր անտառ,  
 Այնտեղ բնութեան երգեհոն կիթառ  
 Երբ ցաւըս ամոքել են անկարում,  
 Քարավազ ջրվեժ ես թնչ եմ անում:

Զովամբար մեծ սար փայլող խոտերով,  
 Կեանքիկ հովիտով, սառն աղբիւրներով,  
 Պապակ եղնիկիս երբ են հալածո՞ւմ,  
 Այդ կոյս բնութիւն ես թնչ եմ անում:

Ահագին լեռներ, ժայռեր իւր կրճքին,  
 Թանկագին մետաղք նոցա յատակին,  
 Երբ հարստութիւնը չէ ինձ զբաղեցնում,  
 Գոհար, ոսկի, արծաթ ես թնչ եմ անում:

Երկիր պարփակող ծով ականակիտ  
 Իւրեան յատակում մարջան, մարգարիտ,  
 Երբ երբ իմ աղէտքներ երկինք չէ տանում,  
 Ալիք, շոգենաւք ես թնչ եմ անում:

Պարզ յստակ երկինք, անհամար աստեղք,  
 Քաջափայլ լուսնեակ, անհուն տիեզերք,

Ինձ փառք ընձեռնել երբ եմ զլանում,  
Այդ գեղեցկուժիւնք ես ին՞չ եմ անում:

Երկինք դուռթեամբ համեստ գեղեցիկ,  
Բուրբած լուսին, ակունք այրեցիկ,  
Երբ լոկ նայելով հոգիս է քաղում,  
Անգարման ցաւը ես թնչ եմ անում:

Տրտում երեսով, այրի ցաւալիր,  
Մանկահասակ կին, հայեացք ոչ պատիր,  
Նա զուրկէ ողջից, նորան եմ սիրում,  
Այլուոյն չեմ ասիլ՝ «ես ին՞չ եմ անում»:

ՎԵՐՋԱՊԷՍ ՀԱՍԱԻ.

Վերջապէս հասաւ ծաղկազարդ գարուն,  
Հիւր եկաւ վարդին սոխակը սիրուն,  
Վերջապէս բացուեց գեղափայլ վարդը,  
Կիժառը լարեց երգեակ սոխակը:

Է՛յ, հոգեհատոր չքնաղ սիրական,  
Աւետեց քեզ էլ լուրը փայլ գարնան,  
Եւ կամ սիրահայց երգը սոխակի՝  
Ազդեց քո հոգուն, վարդազոյն Արփի:

Թէ ազդած լինէր քեզ, բնութեան հրաշք,  
Ո՞վ ամբողջութեամբ իմ կեանքին տիրող,  
Լոկ ձեւի համար ձեր դիւթող հայեացք  
Չէիք նուիրիլ—յետ դառնալ ժխտող:

Ո՞վ թէ զգայիք, է՛յ, վարդ ու բրբուռ,  
Թէ ձեր էութիւն ես ո՞նց եմ սիրում,  
Գուցէ խղճայիք ինձ ջահիլ կեանքում,  
Որ կեանքս եմ մաշում, ուղիղն եմ ասում:

Այն չալ չալ աչքեր կարմիր լիք այտեր,  
Որ հանգիստ հոգումս ստեղծեն ալիքներ,  
Անդրադառնում են երբ հայելից  
Քանզում են հոգիս, հիմքից, յատակից:

Շականակազոյն ձեր փայլուն մագեր,  
Մերկ լանջքիդ հովտում զոյգ անանասներ.  
Յաճախ տեսնելով հոգիս եմ մաշում,  
Կենդանութեան սիւն բոյիդ զմայլում:

Է՛լ բաւ է հոգեակ, հերի՛ք է տանջես,  
Անթօկ, աներկաթ գերես, շղթայես.  
Բացի՛ր վարդերդ, գարունն է հնչում,  
Տարփող երգեակդ ի զուր է կորչում:

Դու տնօրինիր վառուած սոխակին  
Կեանք երանաւետ, կամ մահ ցաւական,  
Վարդերդ սփռէ, կամ փուռը թաղիր  
Նորա կրճքի մէջ, զրկէ գերեզման:

1884 p.

Ա. Ա.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԻԲԵՆԻ ՎԵՐՋԱՔԱՆ ԳԵՐԱՊՍՏԻԻ  
ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ.

Տալով այս մեր գրքոյկը ձեր ձեռքը, ազնիւ  
ընթերցողներ, մենք բոլորովին նպատակ և միջոց  
չունէինք յառաջաբանի մէջ լիշատակած մեր աշ-  
խատութեանց հետ ընտրողաբար վարուել, այն է՝  
ընծայել ձեզ նրանք, որոնք իբր աւելի կըգրաւէին  
ձեր ուշադրութիւնը:

Վասնորոյ թողնելով մնացեալները ապագայի,  
առ այժմ այս մեր փոքրիկ կտորը երկասիրութեան,  
մեր բարիք միայն աշխարհին ցանկացող մըտ-  
քերի, — ձգու՛մ ենք ձեր անաչառ հայեցողութեան  
առաջ, որը եթէ կունենայ մի գէթ փոքր արժա-  
նիք — ընդ նմին պարտաւորացնելով ձեզ ևս՝ խրա-  
խուսելու համար ընդհանուրին ծառայերու գործը,  
աջակցել մեզ, մնացեալների լոյս աշխարհ դուրս  
գալու համար. այսքան:

Գ. Խ.

Գերապաաիւ նպատող բաժանորդներին  
շնորհակալեացս հաւատիքը մատուցանելուց ա-  
ռաջ պատիւ ունիմ նուիրել խորին յարգանքս —  
պատուարժան Տիկին Նուշանիկ Աբովեանցին,  
պարոնայք՝ Բագրատ Տիտանեանցին, Անուշաւան  
Աբովեանցին եւ գրաշար Ղահրաման Տէր-Սիմո-  
նեանցին, որոնք ամենայն մի կողմով ամակցեցին  
մեզ՝ գրքոյկիս լոյս տեսնելու գործի մէջ:

Աշխատասիրողը:

ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ:

ԹԻՖԼԻՉԻՑ

	Օրինակ.
Օր. Մարիամ Աթարէգեան . . . . .	1
Օր. Նունէ Փայիրեան . . . . .	1
Օր. Արուսեակ Հեջուբեան . . . . .	1
Օր. Եղիսաբէթ . . . . .	1
— Սոփիա . . . . .	1
— Գայեանէ . . . . .	1
Օր. Սոփիա Չաչիկեան . . . . .	1
Օր. Մարթա Յովհաննիսեան . . . . .	1
Օր. Մարգարիտ Սափարեան . . . . .	1
Օր. Նատալիա Սափարեան . . . . .	1
Օր Աննայ Խօջամիրեանց . . . . .	1
Տ. Նունէ Յովսէփեանց . . . . .	1

Պ. Աղէքսանդր Դաւթեանց . . . . .	Օրէն.	1
Պ. ՆՁ . . . . .		1
Պ. Զարմայլ Զալինեաց . . . . .		1
Պ. Տիգրան Սարգիսեանց . . . . .		1

ՀՈՒԼԱՎԵՐԻՑ

Պ. Պետրոս Գասպարեանց . . . . .		1
Պ. Պօղոս Գասպարեանց . . . . .		1
Պ. Մելքիսէդէկ Մեհրաբեանց . . . . .		1
Պ. Բագրատ Բուղդանեանց . . . . .		1
Պ. Մ. Նալբանդեանց . . . . .		1

ՋԱԼԱԼ ՕՂԼԻՑ

Պ. Մկրտիչ Պօզոսեանց . . . . .		1
Պ. Ստեփան Սօսեանց . . . . .		1
Պ. Մնացական Աւետեան . . . . .		1
Պ. Յարութիւն Կիրակոսեան . . . . .		1
Պ. Աղէքսանդր Մարֆիրուժեանց . . . . .		1
Պ. Լիւդվիգ Քաթուրեանց . . . . .		1
Պ. Քումաս Աւետեան . . . . .		1
Պ. Նազոր Յակօբեանց . . . . .		1
Պ. Դարչին Թ. Տիտանեանց . . . . .		1
Պ. Աւետիք Զիլաւեանց . . . . .		1
Պ. Մնացական Բունիաթեանց . . . . .		1
Պ. Մկրտիչ Բախչինեանց . . . . .		1
Պ. Սարիբէգ Աւետեանց . . . . .		1
Պ. Մկրտիչ Գործակալեանց . . . . .		1

Տրիսակ

Պ. Մեխակ Աւետեանց . . . . .	Օրէն.	1
Պ. Մատթէոս Աւետեանց . . . . .		1
Պ. Ստեփան Շահպարտեանց . . . . .		1
Պ. Արիստակէս Գրիգորեանց . . . . .		1

ՕՉԻՈՆԻՑ

Պ. Բագրատ Տիտանեանց . . . . .		5
Պ. Ներսէս Տիտանեանց . . . . .		1
Պ. Աղէքսանդր Տիտանեանց . . . . .		1
Պ. Սեդրակ Աբովեանց . . . . .		1
Պ. Ստեփան Աբովեանց . . . . .		1
Ուսուցիչ Պ. Մեհրան Բաղդասարեանց . . . . .		1
Պ. Նայի Վարդանեանց . . . . .		1
Յովսէփ Վարդապետ Խարազեանց Հաղպատցի . . . . .		1
Տիկին Աննա Վարդանեան . . . . .		1
Պ. Սարգիս Տ. Գ. Երզնկեանց . . . . .		1
Տ. Կատարինէ Երզնկեան . . . . .		1
Պ. Պաւլէ Շահպարտեանց Այգեհատցի . . . . .		1
Պ. Ստեփան Քուչարեանց . . . . .		1
Պ. Յովհաննէս Տ. Թ. Քումասեանց Դսեղեցի . . . . .		1
Պ. Խալաթ Խալաթեանց Լեջանեցի . . . . .		1
Պ. Միքայէլ Շահմուրադեանց Արզվեցի . . . . .		1
Պ. Վասիլ Սարգսեանց . . . . .		1
Պ. Աղ. Տէր-Մելիքսեթեանց Գառգառեցի . . . . .		1
Պ. Նիկալայի Տէր-Յովակիմեանց . . . . .		1

- Պ. Պետրոս Պետրոսեանց Ուռուտեցի . 1  
 Պ. Արտաշէս Տէր-Վարդանեանց Աղքորփցի 1  
 Պ. Խաչատուր Շահնազարեանց Աշտարակցի 1  
 Պ. Ասատ. Տէր-Վարդանեանց Գիւլաքարակ 1  
 Պ. Աղէքսանդր Աւետիքեան Ղարաքլիսից 1  
 Պ. Գարեգին Գէորգեան \*) . . . 1

\*) Ներդուլթիւն ենք խնդրում այն պարօններից  
 և տիկիներից, որոնց անունները չտպագրուեցան բա-  
 ժանորդութեան մեր ձեռքը հասած չլինելու պատ-  
 ճառով:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երև.	Տ. Ն.	Սխալ	Ուղղ.
5	14.	ձեր տքնել	ձեր այդ տքնել
6	14.	վրդովեցիք	վրդովեցիք
7	1.	տիտաններեայն	տիտանների այն
8	10.	Տոկոսն	Տոկոսն
14	1.	յարմարցնում	յարմարացնում
15	23.	ծաղկեն կարներին	ծաղկենկարներին
16	22.	յը	որ
17	8.	ճակտին	ճակատին
18	2.	տաճարի քամին	տաճարի ծառին
»	18.	Թառամամիր	Թառամիր
22	15.	լերպ	լերբ

« Ազգային գրադարան



NL0345063

